

ԹՈՒՐԻ ԽԱՉ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑԻ

Holy Cross
Armenian Church

Ն.Ս.Ս.Տ.Տ.

Վազգէն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Թորոնթօ, 18 Յունիս 1980

M VII 1980-278
Վ. Թ.

Վեհափառ Տէր,

Ս.Խաչ ծուխի պատգամաւորները 78րդ պատգամաւորական ժողովին մասնակցեցան:

Իրենց տրուած տեղեկագրութեան ծուխի եւ թեմի առընթեր մասը Ձերդ Վեհափառութեան ուշադրութեան յանձնել յարմար նկատեցինք:

Ներկակեալ գոյգ տեղեկատուութիւններէ ինչպէս յայտնի է, Ս.Խաչի հաստատումը կամ վաւերացումը բացարձակապէս չէ արձանագրուած եւ թեմի հաստատման աշխատութեանց մասին բան չէ գրուած:

Պնդումներու վրայ առնուած բացատրութիւնը գոհացուցիչ ըլլալէ շատ հեռու է: Ըսուածէն աւելին ալ, որեւէ ձեւով ստանալ կարելի չէ եղած:

19րդ դարու բժացած մտայնութիւնը ներկայացնող, պատասխանուութիւնէ զուրկ եւ հնքզինքը ամենակարող նկատող վարչութեան մը պատկերացումն է թեմական իշխանութեան դիրքաւորումը:

Ի՞նչ կը նշանակէ պատգամաւորական ժողովին հաշուէտուութիւնէ եւ բացատրութիւն տալէ խուսափիլ: Արդեօ՞ք իրենք այդ մարմինէն չէին ընտրուած եւ ըստ կանոնագրութեան այդ մարմնոյն պատասխանատու չէին:

Եթէ Առաջնորդ Սրբազան Հայրը ի գին ամէն բանի հաշուէտուութիւնէ կը խուսափէր եւ թեմական Խորհուրդը իր գործունէութեամբ եւ հաշուէտուութեամբ դժգոհութիւն կը յարուցանէր, իրենցմէ ո՞վ հաշիւ պիտի կրնար պահանջել: Նոյն ինքն Վեհափառ Հայրապետը, Ձերդ Սրբութիւնը:

Ահաւասիկ հարցը կու գայ այս կէտին:

Առաջնորդ Սրբազան, Ձերդ Վեհափառութիւնը պատկերէն դուրս հանելու համար ամէն ջանք ի գործ կը դնէ:

Թեմի անջատումը Ձերդ Սրբութեան իղձ ու փափաքն է:

Առաջնորդ Սրբազան այդ՝ իր փափաքը ըլլալով կը ներկայացնէ:

Չերդ ԱրրուՅիւնր 1979 Ապրիլին կը յայտարարէ, թէ թեմը վեց ամիսէն պիտի հաստատուի:

Առաջնորդ Արքագան 1979 Նոյեմբերին ՚երբ եւ եթէ ՚թեմը հաստատուի, ձեզի տեղեակ կը պահենք կ՚ըսէ:

Չերդ ԱրրուՅիւնր, թեմի հաստատման համար Առաջնորդ Արքագանին պէտք հղած ցուցումները ըրինք կ՚ըսէ: —

Առաջնորդարանը, թեմը բաժնելու համար Վեհին առաջարկներ ներկայացուցինք կ՚ըսէ:

Կը հասկնանք, թէ Առաջնորդ Արքագանը եւ թեմական Խորհուրդը թեմի հաստատման հարցով որոշ ըսելիքներ, թելադրութիւններ եւ զաղափարներ պէտք է ունենան, սակայն ոչ թէ Վեհիդ կամքը եւ փափաքը չէզոքացնելու եւ ծուխերու խնդրանքը անտեսելու ուղղութեամբ:

Պատգամաւորական ժողովին, Հոգ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Աւետիքեան կը յայտարարէ, թէ Վեհիդ հրամանաւ, ցնոր տնօրինութիւն, մեր թեմին եւ բաժանեալ եղբայրներու միջեւ բանակցութիւնները զադրեցուած են:

Նոյն օրը կէսօրէ վերջ, թեմական Խորհուրդը - Փառէն Վրդ. այս նիստին կը բացակայէր - առաջարկ կը բերէ որ թեմական Խորհուրդը եւ կանոնազրի յանձնախումբը իրենց յարմար նկատած թուականին բաժանեալ եղբայրներու հետ դարձեալ շփման սկսի:

Եթէ թեմական Խորհուրդի փոխ Ատենապետ Փառէն Ծ. Վրդ. ի ըսածը ճիշդ էր, թեմական Խորհուրդը այս առաջարկով Չերդ Վեհափառութեան հրահանգը նրկատողութեան առնել չի տաւարիր:

Չերդ ԱրրուՅեան եւ Առաջնորդի մը միջեւ, հոգ չէ թէ Ան 50-60 ծուխերով թեմի մը, նիւթապես հարուստ երկրի մը եպիսկոպոսն է, հեղինակութեան եւ ուժի պայքար մըն է որ տեղի կ՚ունենայ:

Ո՞վ է տուժողը: Մեր համայնքները:

Թեմական իշխանութիւնը Գանատայի մէջ թեմ հաստատուելուն բացարձակապէս համամիտ չէ: Ղրկուած հեռագիրները, նամակները եւ եղած խօսակցութիւնները իրողութիւնները քողարկելէ ու իրենց նպատակը իրագործելու համար ժամանակ շահելէ տարբեր բաներ չեն:

Ասոնք մի միայն մեր զաղափարները եւ տեսակէտները չեն: Բոլոր անոնք որ թեմական եւ եկեղեցական հարցերով մօտէն կը հետաքրքրուին, նոյն եզրակացութեան հասած են:

Առաջնորդարանը, Ամերիկայի Յոյն Օրթօտօքս եկեղեցիին նման, բոլոր Ամերիկան պարիակող Առաջնորդարանի մը տեսիլքը ունի: Այս տեսիլքին արգելք հանդիսացող ամէն զաղափարի եւ անձի դէմ պիտի պայքարի:

Այս պայքարը Մայր Աթոռի հեղինակութիւնը կը տկարացնէ եւ կը նսեմացնէ նաեւ Առաջնորդարանի վարկը: Եւ դիտենք թէ ովքեր կրնան օգտագործուիլ ասկէ:

Չերդ Վեհափառութիւնը որոշումի մը յանգած է: Գանատահայութիւնը թեմի հաստատումը կը փափաքի: Մոնթրէալի, Ս. Քաթրինսի, Ս. Երրորդութեան եւ Ս. Խաչի ծխական Անդամական ժողովները թեմի հաստատման ի նպաստ պաշտօնական որոշումներ անցուցած են: Այլեւս ասոր ձգձգումը կամ յետաձգումը բացարձակ կհրաով անտեղի է:

Համիլթօնի, Օթթօվայի եւ Վենքուվէրի ծուխերը տակաւին պզտիկ ծուխեր ըլլալով հետեւորդ դերքի մէջ են:

Չորս մեծ ծուխերը, օրինական գետնի վրայ, իրենց փափաքը պաշտօնապէս յայտարարած են: Այլեւս Մայր Աթոռին կը մնայ իր ձեռքի տուեալները, Առաջնորդարանի հակաառաջարկներուն հետ բաղդատել ու հակասութիւնները տեղուոյն վրայ քննելու համար պէտք եղած քայլը առնել:

1979 Նոյեմբերին տեղեկացուեցանք, թէ Չերդ Վեհափառութիւնը Միացեալ Նահանգներ պիտի այցելէ: Մեր խնդրանքին վրայ, շրջապատյոյսի ժամանակացոյցին Գանատական ծխական Խորհուրդներու հետ հանդիպում մը աւելցուեցաւ: Ծխական Խորհուրդս, յուսալով թէ Չերդ Արքութեան ներկայութեամբ թեմի հարցը բարուք լուծում մը կրնայ գտնել, սպասող դիրք մը ընդգրկած էր:

Այսօր Գանատայի մէջ քառսային վիճակ մը կը տիրէ:

Հոգ. Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեան իր պաշտօնէն հեռացած է: Ինչո՞ւ: Իր ծուխին՝ Ս. Երրորդութեան եւ Առաջնորդ Արքեպանին հետ ունեցած իր անհամաձայնութեան պատճառաւ: Առայժմ Գանատայի մէջ ոչ Առաջնորդի Փոխանորդ կայ եւ ոչ ալ Ս. Երրորդութիւն մնայուն հոգեւոր հովիւ մը ունի:

Մոնթրէալի հոգեւոր հովիւ Հոգ. Տ. Պարետ Վրդ. Երեցեան, եկեղեցիէն ներս, ոչ թէ կղերականի մը այլ պարզ աշխարհականի մը անգամ անվայել, ունեցած կեցուածքին պատճառաւ ծխական Խորհուրդին կողմէ պաշտօնէն հեռացած է:

Եթէ այսօր, Գանատայի մէջ թեմական իշխանութիւն մը ըլլար, ասոնց ոչ մէկը կրնար պատահիլ:

Նկատի ունենալով թէ պատգամաւորական ժողովին, հակառակ մեր պատգամաւորներուն անդումներուն, Առաջնորդարանը իր դրկած առաջարկները կամ թելադրութիւնները չէ տեղեկացուցած, Չերդ Վեհափառութենէն կը խնդրենք, որ ուղղարկուած ծրարի պարունակութենէն մեզ տեղեակ պահէք:

Հաւաստի աղբիւրներէ կ'իմանանք, թէ Առաջնորդարանը Գանատական թեմի հաստատումը երեք տարիով յետաձգել կը փափաքի: Եթէ պարագան այսպէս է, այդ մեզի համար բացարձակապէս անընդունելի է:

Հոս օրինազանցութեան նմուշ մը տալ կ'ուզենք:

Ըստ Թեմական կանոնագրութեան 54րդ յօդուածին, ծուխեր իրենց տրատու անդամներուն թիւին համապատասխան պատգամաւորներ կ'ընտրեն:

Առաջնորդարանէ ստացուած պաշտօնական թղթակցութենէ մը կը տեղեկանանք, թէ Ս. Երրորդութիւն եկեղեցին 308 տրատու անդամ ունի եւ չորս

ագամաւորներ: Մինչդեռ վերոյիշեալ յօդուածի համաձայն միայն երեք պատգամաւորներ կրնային ունենալ:

Նոյն կանոնադրութեան յօդուած 86-ե համաձայն, Առաջնորդի պարտականութիւնն է հսկել կանոնադրութեան ծշգրիտ գործադրութեան:

Ասիկա Առաջնորդարանի կամայական գործունէութեան մէկ ուրիշ փաստն է:


Առաջնորդարանի ցոյց տուած դիրքը եւ պայմանները նկատի ունենալով, յետ այսու մեր կողմէ որեւէ քայլ որ պիտի առնուի մեծ արձագանգներ կրնայ ունենալ:

Արեւշատութեան մաղթանքներով՝

Մատչիմք ի համբոյր
Չերդ Վեհաձառութեան Ս.Աջին

ի Դիմաց
Ծխական Խորհուրդի

Յուզ Քիւսմարեան
Տօքթ. Վաչէ Բէրամէթլիեան
Ատենադպիր


Արմէն Բիւրբեան
Ատենապետ

Ս. Խաչ ծուխի պատգամաւորներուն ծխական Խորհուրդին ներկայացուցած տեղեկատուութեան Ս. Խաչի եւ Գանատական Թեմի կապակցութեամբ մասերը.

29-31 Մայիս Թուականներուն, 78րդ Գատգամաւորական ժողովին Ս. Խաչ եկեղեցւոյ ծխական Խորհուրդի Ատենապետին հետ միասնաբար ներկայ զտնու-
եցանք:

Մեր հինգ պատգամաւորներուն ինքնութիւնը ցոյց տուող անուանապիտակ-
ները չէր պատրաստուած, մինչդեռ ուրիշներունը կանխաւ տպագրուած էր:

Թեմական Խորհուրդի, գրքոյկի մը ձեւով պատրաստուած, 1979 տարւոյ
գործունութեանց տեղեկատուութեան մէջ Ս. Խաչ եկեղեցւոյ ճանաչման կամ
հաստատման մասին բառ մը իսկ չկար:

Գանատայի մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ Թեմ հաստատելու մասին ոչ
տեղեկատուութեան եւ ոչ ալ ժողովի օրակարգին մէջ տեղ տրուած էր:

Առաջնորդ Արքազանի շրջապտոյտները եւ այցելութիւնները մի առ մի
գրուած ուլալով հանդերձ, Փարիզ, Վեհափառ Հայրապետի հետ ունեցած տեսու-
թիւնը գանգ առնուած էր:

Ս. Խաչ Ազգային Ամենօրեայ Վարժարանի ղոյութիւնը կամ այս վարժարանի
Թեմական Իշխանութեան Ինթակայութիւնը Առաջնորդ Արքազան կ'անգիտանար:

Մեր անուանապիտակները ձեռագիր գրուեցան եւ մեզի տրուեցան:

Մեր պատգամաւորներու յաջորդական պնդումներուն վրայ, Թեմական Խոր-
հուրդը ստիպուեցաւ ռսելու, թէ վրիպում եղած էր եւ եկեղեցւոյ հաստատումը
օրուայ առնագրութեանց մէջ արձանագրուեցաւ:

Մեր՝ Գանատական Թեմի հաստատման, ուրիշ պատգամաւորներու՝ Ս. Ներսէս
Աստուածաբանական Վարժարանի, Գալուքճեան հիմնադրամի, Թեմէն ներս կղերական-
ներու պակասի հարցերով պնդումներուն տեղի տալով -- վերոյիշեալ հարցերու
մասին տեղեկատուութեանց մէջ տեղ չէր տրուած -- Թեմական Խորհուրդը, ժո-
ղովի յաջորդ նիստին, բարեհաճեցաւ տեղեկութիւն տալ:

Դատաւոր ճան նաճարեանի տեղեկութեան համաձայն, Առաջնորդարանը նոյնմ-
բիւր ամսոյն մէջ իր Թելագրութիւնները Վեհափառ Հայրապետին ուղղարկած էր
մինչեւ 1 Ապրիլ պատասխան մը խնդրելով: Այս պատասխանը ցարդ չէր ստացուած:

Այս Թելագրութիւնները, հաւատակ մեր պնդումներուն շրջապայտուեցան
այն տոսաւորութեամբ թէ՛ Վեհափառ Հայրապետը Թելագրանքներէն ոմանք կրնար
չընդունիլ եւ պատգամաւորական ժողովը այդ կէտերը պէտք չէր գիտնար:

Ինչպէս որ ստացուած տեղեկութեան, Վեհափառ Հայրապետի հաւանութիւնը
ստացուելէ վերջ, Թեմը ամէնականուի մէկուկէս տարիէն հազիւ կրնար կազմուիլ:

Մեր կողմէ, ժողովին բացատրուեցաւ, թէ վարժարանը ծխական Խորհուրդի
իշխանութեան ենթակայ էր ու հոգաբարձութիւնը ծխական Խորհուրդի կողմէ կը
նշանակուէր եւ ծուխը Թեմին ենթարկուելով Գանատայի մէջ հիմնուած ծխական
առաջին ամենօրեայ այս վարժարանը՝ Ս. Խաչ Ազգային Ամենօրեայ վարժարանը
Թեմի ամբողջականութեան մաս կը կազմէր: —